## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1948 ՅՈՒՆՈՒԱՐ – ՓԵՏՐՈՒԱՐ Թիւ 1-2

Էջ

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ. – Յոյսի տարին . . . 1

**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**

Հ. ԳՐ. ՍԱՐԳՍԵԱՆ. – Գրիգոր Կաթ. Անաւարզեցի. մատենագիր . . . . . . 4

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ. – Ստեփանոս Նաղաշ . . 9

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ. – ԺԵ դարու մի անյայտ նկարչուհի . . . . . . 45

**ԳՐԱԿԱՆ**

Հ. Մ. Ճ. – Խ. Աբովեան, Ս. Նազարեանց, Գ. Դոդոխեանց՝ Դորպատի համալսարանի դիւանական վկայաթուղթերուն համաձայն . 16

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ. – Երկիր իմ մայր (բանաստ.) 20

ՄԱՐԻ ԱԹՄԱՃԵԱՆ. – Աշնային իրիկնամուտ (բանաստ.) . . . . . . . 25

Ք. Ա. – Ողբերգ Գուրգէնի յիշատակին (բանաստ.). 30

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՊԱԶ. – Պատկերազարդ էջ մը (պատմուածք) . . . . . . 31

ՅԱԿՈԲ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ. – Աշնան արեւ (բանաստ.) 33

ԽՄԲ. – Նոր սուրհանդակ «Բազմավէպ»ի . . 33

ԵԴՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ. – Ձօն առ «Բազմավէպ» վասն պանծալի Հարիւրամեակին (գրաբար բանաստ.) . . . . . . 43

ՎԱՀՐԱՄ ԱՐԾՐՈՒՆԻ. – «Բազմավէպ»ի հարիւրամեակը և հայ ընտրանին . . . 44

**ԼԵԶՈՒԱԿԱՆ**

Հ. Մ. Ճ. – Աշխարհաբարի հարցեր . . . 37

**ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ**

ՃԱՐՏ. Ս. ՃԵՎԱՀԻՐՃԵԱՆ. – Հայկական ճարտարապետութեան մէջ ներդաշնակութեան կանոններու պրպտումի փորձեր (շար.) . . 22

Հ. Մ. Ճ. – Գուրգէն Մ. Ալէմշահ (մահուան առթիւ) 26

ՅԱԿՈԲ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ. – Հայ կնոջ մը եթերային ձայնը Նիւ Եորքի երկնակամարին վրայ. Տիանա Սարգիս . . . . . 34

**ԱՅԼԵՒԱՅԼՔ**

Շնորհաւորութիւններ և գնահատականներ «Բազմավէպ»ի յոբելեանին առթիւ . 40

**ԳՐԱԽՕՍԱԿԱՆ**

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ. – «Նիւթեր Եգիպտոսի հայոց պատմութեան համար» Գրեց Արտաշէս Գարտաշեան, Գահիրէ, 1943 . . . . 47

— . – «Էջմիածին». պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի . 48

## SOMMAIRE

1948 Janvier - Février N. 1-2

PAGE

**ARTICLE DE FOND**

*P. M. Djanachian.* – L' année d' espérance . 1

**PHILOLOGIE**

*P. Grégoire Sarkissian.* – Grégoire d' Anazarba, écrivain . . . . . 4

*H. Kurdian.* – Stépanos Naghache . . 9

*Aram Erémian.* – Une miniaturiste inconnue du XVe siècle . . . . 45

**LITTERATURE**

*P. M. Dj.* – K. Apovian, S. Nazariantz, K. Totokhiantz, d'après les documents de l'Université de Dorbad . . 16

*Krikor Arzrouni.* – Ma mère-patrie (poésie) 20

*Marie Atmadjian.* – Crépuscule d'automne (poésie) . . . . . . 25

*K. A.* – Lamentation à la memoire de Kourkène . . . . . 30

*Stépan Chahbaz.* – Une page illustrée (conte) 31

*Hagop Kouyoumdjian.* – Soleil d'automne . 33

*Réd.* – Le nouveau messager de «Pazmaveb» 33

*Edouard Kolandjian.* – Vœux au «Pazmaveb» pour son glorieux centenaire (poésie en arm. classique) . . 43

*Vahram Arzrouni.* – Le centenaire de «Pazmaveb» et l'élite arménienne . . 44

**LINGUISTIQUE**

*P. M. Dj.* – Etudes sur l'arménien moderne 37

**BEAUX-ARTS**

*Ing. S. Djévahir.* – Essai sur les règles d'harmonie dans l'architecture arménienne (IIIe partie) . . 22

*P. M. Dj.* – K. M. Alemchah (à l'occasion de sa mort) . . . . 26

*Hagop Kouyoumdjian.* – La voix éthéréenne d'une arménienne à la Radio de New York: Diana Sarkis . . . 34

**DIVERS**

Félicitations et appréciations pour le Centenaire de «Pazmaveb» . . 40

**RECENSIONS**

*H. Kurdian.* – «Matériaux pour l'histoire de l' Egypte», par Ardachès Kardachian, Le Caire 1943 . . . 47

— . – «Etchmiatzine» organe du patriarcat arménien de St. Etchmiatzine 48

# ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ – ԳԻՏԱԿԱՆ – ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 – 1948
106-րդ ՏԱՐԻ

ՅՈՒՆՈՒԱՐ – ՓԵՏՐՈՒԱՐ
ԹԻՒ 1 – 2

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## ՅՈՅՍԻ ՏԱՐԻՆ

Նոր տարի երբ կը թեւակոխենք նոր տարւոյ սեմին վրայ՝ սրտաբուխ, երջանիկ պատրանքի մը խանդավառութեամբ կը նետուինք նոր ու յուսալից կեանքի մը գիրկը. պահ մը կը մոռնանք կարծես անցեալին ցաւերն ու մտատանջութիւնները, և բոլոր յուսախաբութիւնները որ անցած են մեր մռայլ հորիզոնէն։

Մարդկային է այս օրօրումը մեր մտքին ու սրտին...։ Ապագայի յայտնատեսութիւնը կը խուսէ մեզմէ, ու անիկա ո՛րքան որ տկարութիւն է որչափ ինքնախաբանութիւն՝ բայց մեր հոգեկան անդորրով ապրումին համար անհրաժեշտ կարեւոր բարիք մ'է միանգամայն։ Յոյսի թեւերը խորտակել պիտի ըլլար. տեսնելը վաղուան անհուն տառապանքին թաւալումը մեր էութեան վրայ, տեսնելը ակն յայտնի մահուան հրեշտակին թեւահարումը մեր դրան վրայ, տեսնելը և զգալը մեծ կործանումի մը անդիմադրելի ընթացքը մեր ակնկալութիւններուն ոսկեղող երազին վերեւ։

Այդ լուսաշողող աստղին՝ «Յոյսի հրեշտակին» յառած մեր տենդավառ աչքերը՝ կը նայինք ապագային ու կը մաղթենք իրարու Շնորհաւո՛ր Ամանոր։

Կ'անցնի տարւոյն անդրանիկ օրուան հոգեկան խանդավառութիւնը, ու կեանքը կը վերսկսի իր ընթացքը, միեւնոյն աշխատանքի ծիրներով, միեւնոյն մտահոգութիւններով, պատրանքներով, և յոյսերու տենդագալար խորտակումով։ Այս հեւիհեւ վազքը իր մէջ տարօրինակ հաճոյք մ'ալ ունի,



digitised by A.R.A.R.@

որուն կը փարինք և զոր կարծես կը փնտռենք։ Չարին ու բարիին, ազնիւին ու տմարդիին, տգեղին ու գեղեցիկին, ազնուականին ու ցածին այս յաւերժական ընդհարումը դիտած է մարդկութիւնը սկսեալ առաջին դարերէն և դեռ պիտի դիտէ ընդերկար։

Բայց ինչ որ կը յատկանշէ մեր դարը և մեր այսօրուան ապրած կեանքը՝ սովորական տագնապները և սովորական անկումները չեն որ կը տառապեցնեն մարդկային քայլերը, այլ ընկերային, հոգեբանական ու մտային վերիվայրումներն են որ գաղափարախօսութիւն անունին տակ կը տարողնեն, կը բաժնեն ուժերը, ու մարդիկ փոխանակ առաջնորդուելու միակ բարձրագոյն նպատակէն համերաշխ համագործակցութեան մը, վանողական արտակեդրոն զօրութեանց մը կը հեռանան իրարմէ, կը բաժնուին ու կը տկարանան. Այս է ահա աշխարհի վիճակը մարդկութեան, որ միանգամայն զրկուած առաջնորդող բարոյական ողջամիտ սկզբունքներէ, ու կորանցուցած չարի և բարիի ճշմարիտ զգացողութիւնը՝ փիլիսոփայական նորաստեղծ դրութիւններէ դրութիւն կը զարնէ իր գլուխը, բանալով իր իսկ ձեռքով ոտքերուն տակը զարհուրելի անդունդ մը, ուր անգիտակցաբար կ'երթայ գահավիժիլ։ Հեռացում բարոյական ողջ սկզբունքներէ՝ կը նշանակէ հեռացում Քրիստոսէ, հեռացում աստուածային վարդապետութենէն, քրիստոնէական համեղբայրութեան լաւ հասկցուած վարդապետութենէն։

Պակսելով ամենէն անհրաժեշտ պայմանը, այն է բարոյական ճշմարիտ սկզբունքը մարդկային համակենակցութիւնը կառավարող, բնականաբար մազիրար բնաջնջելու վայրագ բնազդը կ'առնէ անհամեմատելի չափեր, մանաւանդ երբ ճարտարարուեստի զարգացման բոլոր միջոցները ի սպաս կը դրուին այդ նպատակին։ Անկէ քանդումն է քաղաքակրթութեան, ժխտումը ամէն մտաւորական ու հոգեկան արժէքի. մարդիկ մեքենաներ են, կոյր ու անբան գործադիրները բնաջնջումի քաղաքականութեան՝ որ այսօր յայտնի կամ չին կը տիրապետէ առհասարակ բոլոր մտքերուն վրայ։ Կը գումարուին խորհրդաժողովներ, կը կազմակերպուին նիստեր յանուն արդարութեան և խաղաղութեան, բայց մարդկութիւնը կը շարունակէ մնալ իր անկայուն և տարտամ կացութեան վրայ, անկեղծութեան և ճշմարիտ իրերահասկցողութեան պակասէն։

Մարդկութիւնը ներկայիս ամէն բանէ առաջ պէտք ունի լոյսի, սիրոյ և գաղափարականի։ Այդ լոյսը պէտք է գայ վերէն, սէրը պէտք է բխի անկեղծ սրտի մը խորէն, ու գաղափարականը հարկ է ծնունդն ըլլայ ճշմարտասէր մտքերու։ Տառապող մարդկութեան հետ կը տառապի ամէն անհատ որ կը պատկանի մեծ կամ փոքր ազգի մը անխտրաբար։ Շուրջ երեք տարի է որ դադրած են սուրն ու կրակը քաղաքներէն ու անդաստաններէն, սակայն

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ЗՍՍՌ–Арм. ССР им. А. Мясникяна
460-67



սպառուած անդորրութիւնը, բնականոն կեանքի երջանկութիւնը տակաւին իղձ մըն է և ոչ թէ իրականութիւն։ Եւրոպա, մարդկային քաղաքակրթութեան կեդրոնը և խանձարուրքը՝ մանաւանդ միջին դարէն ասդին, վայելած չէ երբեք անընդհատ քառասուն տարի մը խաղաղութեան բարիքը, քաղաքացիական կռիւներ, աշխարհակալներու փառասիրական պատերազմներ վրդոված են զայն միշտ. ու մեր դարուն երկրորդ անգամ ըլլալով նաեւ ամբողջ տիեզերքը իրեն հետ քաշքշած է հրդեհին մէջ։

Կը մտնենք նոր տարիի մը սեմէն ներս, բայց դեռ մռայլ է հորիզոնի համայնապատկերը, սրտերը անհանգիստ են։ Վաղուան գալիքին անորոշութիւնը կը կաշկանդէ ձեռնարկի ոգին, կը չքանէ ստեղծագործական ճիգը ու անպտղաբեր և ցրտասառոյց ձմեռ մը կը մարէ խանդավառութեան կրակը։

Այս տխուր ապրումները կ'ունենանք ամէնքնիս կամայ ակամայ, երբ կը նետենք ակնարկնիս համաշխարհային քաղաքական կացութեան վրայ. ամենուրեք, բոլոր երկիրներու մէջ կը տեսնենք որ ներքին խլրտումներ, ընկերային կարգերու իրարու դէմ բախումներ կը խմորուին, զանգուածներ ամբոխային ոգեւորութեան մէջ մոռցած ուղիղն ու օգտակարը, արդար իրաւակարգը, ողջամիտ մտքի պահանջները, կոյր ուժէ մը մղուածներու պէս կը տարուին, կը մեծցնեն հոսանքը, ու բնականաբար կը վտանգեն հանրական խաղաղութիւնը։

Միջազգային տագնապի այս օրերուն, միակ մխիթարութիւնը նորէն այն է որ պիտի հնչէ, ոչ շատ ուշ, ժամը այն երջանիկ օրուան՝ երբ լոյսի, ճշմարիտ սիրոյ և գաղափարականի յաղթանակը պիտի տօնախմբուի բոլոր մարդկային շահերու և փառասիրութիւններու վրայ։ Բախտը ու ճակատագիրը տիեզերքին՝ Աստուծոյ ձեռքին մէջն է, Ան է որ պիտի ուղղէ մարդկութեան նաւը այս ահաւոր ալէկոծութենէն դէպի նաւահանգիստի անդորրութիւնը։

Ամանորի մեր մաղթանքը լոյսի և երջանիկ ակնկալութիւններու մաղթանքն է։

ԽՄԲ.

3539-ԱՀ
digitised by A.R.A.R.@